

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՄԻԳՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2010 թվականի նոյեմբերի 19)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմերը,

հիմք ընդունելով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական համայնք հիմնադրելու մասին» պայմանագիրը եւ 1999 թվականի փետրվարի 26-ի «Մաքսային միության եւ միասնական տնտեսական տարածքի մասին» պայմանագիրը,

ելնելով Միացյալ ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար փաստաթղթերին եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում մշակած սկզբունքներին կողմնակցությունից,

արտահայտելով աշխատանքային միգրացիայի ոլորտում Կողմերի համագործակցության համակողմանի զարգացմանն աջակցելու ձգտումը,

գիտակցելով Կողմ պետությունների միջ եւ աշխատանքային միգրացիայի նշանակությունը եւ մասշտաբները, ապօրինի աշխատանքային միգրացիայի կանխարգելման, հարկադիր աշխատանքի վերացման եւ միգրանտ աշխատողների սոցիալական պաշտպանության կարեւորությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

#### Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով գործածվում են հետեւյալ եզրույթները՝

«աշխատանքային գործունեություն»՝ աշխատող միգրանտի աշխատանքային գործունեություն, որը նա իրականացնում է աշխատանքի տեղավորման պետության տարածքում՝ դրա օրենսդրությանը համապատասխան աշխատանքային պայմանագրի հիման վրա,

«միգրանտ աշխատող»՝ Կողմ պետություններից մեկի քաղաքացի հանդիսացող անձ, որն օրինական կերպով գտնվում է օրինական հիմքերով իրականացնում է աշխատանքային գործունեություն այն մյուս Կողմ պետության տարածքում, որի քաղաքացին նա չի հանդիսանում եւ որտեղ մշտապես չի բնակվում,

«միգրանտ աշխատողի ընտանիքի անդամ»՝ միգրանտ աշխատողի հետ ամուսնության մեջ գտնվող անձ, ինչպես նա եւ նրա խնամքի տակ գտնվող երեխաները եւ այլ անձիք, որոնք աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության համաձայն համարվում են ընտանիքի անդամ,

«գործատու»՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ պայմաններով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա միգրանտ աշխատողին տրամադրում է աշխատանք,

«աշխատանքի տեղավորման պետություն»՝ Կողմերից մեկի պետությունը, որի տարածքում միգրանտ աշխատողն աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացնում է աշխատանքային գործունեություն,

«մշտական բնակության պետություն»՝ Կողմերից մեկի պետությունը, որի տարածքում միգրանտ աշխատողը մշտապես բնակվում է եւ որի տարածքից մուտք է գործում մյուս Կողմի պետություն՝ վճարովի աշխատանքային գործունեություն իրականացնելու համար,

«խտրականություն»՝ սեռի, ռասայի, ազգության, ծագման, դավանանքի, համոզմունքների, ինչպես նա եւ գործնական հատկանիշներին չառնչվող այլ հատկանիշներով տարբերություններ, բացառություններ, նախապատվություններ եւ միգրանտ աշխատողների իրավունքների եւ ազատությունների նկատմամբ սահմանափակումներ սահմանելը,

«լիազոր մարմիններ»՝ Կողմ պետությունների մարմիններ, որոնց իրավասության մեջ մտնում է սույն Համաձայնագրի կիրարկումը,

«սոցիալական ապահովություն (սոցիալական ապահովագրություն)»՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքերից եւ մայրության հետ կապված պարտադիր սոցիալական ապահովագրություն, արտադրությունում դժբախտ պատահարներից եւ մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրություն եւ պարտադիր բժշկական ապահովագրություն:

## **Հոդված 2**

Սույն Համաձայնագիրը սահմանում է միգրանտ աշխատողների եւ նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակը, ինչպես նա եւ կարգավորում է միգրանտ աշխատողների կողմից աշխատանքային գործունեություն իրականացնելու կարգը եւ նրանց սոցիալական պաշտպանության հետ կապված հարցերը:

## **Հոդված 3**

Սույն Համաձայնագրի շրջանակներում աշխատանքի տեղավորման պետության գործատուների կողմից միգրանտ աշխատողներին ներգրավելու հետ կապված գործունեությունն իրականացվում է առանց ազգային աշխատանքային շուկայի պաշտպանության վերաբերյալ սահմանափակումները հաշվի առնելու, իսկ միգրանտ աշխատողներին հարկավոր չէ ստանալ Կողմ պետությունների տարածքներում աշխատանքային գործունեություն իրականացնելու թույլտվություն:

## **Հոդված 4**

Միգրանտ աշխատողի աշխատանքային հարաբերությունները գործատուի հետ կարգավորվում են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ, ինչպես նա եւ սույն Համաձայնագրով եւ ձեւակերպվում են աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով:

Աշխատանքային պայմանագիր կնքելու համար միգրանտ աշխատողը գործատուին տրամադրում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր, ինչպես նա եւ միգրանտ աշխատողի աշխատանքի տեղավորման պետության տարածքում գտնվելու օրինականությունը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթեր):

## **Հոդված 5**

Միգրանտ աշխատողը եւ նրա ընտանիքի անդամներն ազատվում են աշխատանքի տեղավորման պետության լիազոր մարմիններում գրանցվելուց (գտնվելու վայրում հաշվառվելուց) աշխատանքի տեղավորման պետության տարածք մուտք գործելու օրվանից 30 օրվա ընթացքում:

Միգրանտ աշխատողի եւ նրա ընտանիքի անդամների ժամանակավոր կացության ժամկետը սահմանվում է համաձայն գործատուի հետ միգրանտ աշխատողի աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի:

## **Հոդված 6**

Միգրանտ աշխատողների աշխատանքային գործունեության, նրանց զբաղմունքների եւ գտնվելու տարածքի վերաբերյալ սահմանափակումները, որոնք սահմանվում են Կողմ պետությունների օրենսդրությամբ, ազգային անվտանգությունը, այդ թվում՝ ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ճյուղերում, հասարակական կարգը, բարոյականությունը, առողջությունը, այլ անձանց իրավունքները եւ շահերն ապահովելու նպատակներով, ինչպես նա եւ գործազրկությունից սոցիալական պաշտպանության նպատակներով պետությունների կողմից ձեռնարկվող միջոցները, որոնք ֆինանսավորվում են Կողմերի պետական բյուջեներից, չեն կարող դիտարկվել որպես միգրանտ աշխատողների կամ նրանց ընտանիքի անդամների իրավունքների եւ ազատությունների նկատմամբ խտրականություն կամ սահմանափակում:

## **Հոդված 7**

Սույն Համաձայնագրի կիրարկման նպատակներով Կողմերը համագործակցությունը զարգացնում են հետեւյալ ուղղություններով՝

արտաքին աշխատանքային միգրացիայի կարգավորման ոլորտում քաղաքականության համաձայնեցում,

Կողմ պետությունների տարածքներում միգրանտ աշխատողների կազմակերպված հավաքագրմանը եւ ներգրավմանը օժանդակություն՝ նրանց կողմից աշխատանքային գործունեություն իրականացնելու համար,

միգրանտ աշխատողների աշխատանքի ապօրինի օգտագործման կանխարգելում, միգրանտ աշխատողների եւ նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակի, զբաղվածության եւ սոցիալական ապահովագրության հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում:

## **Հոդված 8**

Աշխատանքի տեղավորման պետության տարածք մուտք գործելու ամսաթվից 90 օրն անցնելուց հետո աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում միգրանտ աշխատողն իրավունք ունի 15 օրվա ընթացքում, աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ պայմաններով, կնքել նոր աշխատանքային պայմանագիր, այդ թվում՝ մեկ այլ գործատուի հետ:

Աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հետ կապված միգրանտ աշխատողի իրավունքները եւ պարտականությունները կարգավորվում են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ:

## **Հոդված 9**

Միգրանտ աշխատողն իրավունք ունի աշխատանքի տեղավորման պետության լիազոր մարմիններից եւ գործատուից ստանալ կացության պայմաններին եւ կարգին, աշխատանքային գործունեություն իրականացնելուն, ինչպես նա եւ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքներին եւ պարտականություններին վերաբերող տեղեկություններ:

## **Հոդված 10**

Միգրանտ աշխատողի (այդ թվում նախկին աշխատողի) պահանջով գործատուն պարտավոր է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում տրամադրել միգրանտ աշխատողին իր մասնագիտության (որակավորման, պաշտոնի), աշխատած ժամանակահատվածի եւ աշխատավարձի նշումով տեղեկանք:

Սահմանված կարգով ձեւակերպված այդ տեղեկանքը եւ (կամ) դրա հաստատված օրինակը միգրանտ աշխատողին գործատուի կողմից տրամադրվում է (են) անհատույց:

## **Հոդված 11**

Միգրանտ աշխատողների սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը), բացի կենսաթոշակայինից, իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության համաձայն:

## **Հոդված 12**

Միգրանտ աշխատողի երեխաները, որոնք իր հետ միասին բնակվում են աշխատանքի տեղավորման պետության տարածքում, իրավունք ունեն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության համաձայն հաճախել նախադպրոցական հաստատություններ, ստանալ կրթություն:

## **Հոդված 13**

Միգրանտ աշխատողի եւ նրա ընտանիքի անդամների՝ պատշաճ անվճար շտապ (անհետաձգելի) բժշկական օգնություն ստանալու իրավունքը կարգավորվում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով, որոնց այդ պետությունը մասնակից է:

## **Հոդված 14**

Միգրանտ աշխատողն ունի աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով անձնական օգտագործման համար նախատեսված ապրանքներ ներկրելու եւ արտահանելու իրավունք:

Միգրանտ աշխատողն ու իր ընտանիքի անդամներն իրավունք ունեն՝

աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության համաձայն տիրապետել, օգտագործել եւ տնօրինել իրենց գույքը,

իրենց հայեցողությամբ իրենց պատկանող գույքի վերաբերյալ կատարել աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը չհակասող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իրենց գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, սեփականատեր մնալով փոխանցել նրանց գույքը տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրավունքները, գույքը գրավ դնել եւ այլ միջոցներով ծանրաբեռնել այն, տնօրինել այն այլ կերպով,

իրենց գույքը հանձնել լիազորագրային կառավարման,

աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության համաձայն սեփականության պաշտպանության,

անարգել կերպով փոխանցել վաստակած միջոցները՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցը այն հանդիսանում է, սահմանված կարգով:

### **Հոդված 15**

Միգրանտ աշխատողը եւ նրա ընտանիքի անդամները պարտավոր են հետեւել աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը, հարգել դրա մշակույթը եւ ավանդույթները, աշխատանքի տեղավորման պետության տարածքում իրենց կողմից կատարված իրավախախտումների համար պատասխանատվություն կրել՝ դրա օրենսդրությանը համապատասխան:

### **Հոդված 16**

Միգրանտ աշխատողն իրավունք ունի անդամակցելու արհմիությունների՝ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների հետ հավասար կարգով:

### **Հոդված 17**

Միգրանտ աշխատողի եկամուտները, որոնք նա ստացել է աշխատանքի տեղավորման պետության տարածքում աշխատանքային գործունեության արդյունքում, ենթակա են հարկման՝ աշխատանքի տեղավորման պետության հարկային օրենսդրության եւ միջազգային պայմանագրերի համաձայն:

### **Հոդված 18**

Սույն Համաձայնագրի կիրարկումն ապահովվում է լիազոր մարմինների կողմից, որոնք համագործակցում են իրենց իրավասությունների շրջանակներում եւ իրենց պետությունների օրենսդրության պահպանմամբ:

Կողմերը, սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումը հղելու հետ միաժամանակ, տեղեկացնում են ավանդապահ նշված լիազոր մարմինների մասին:

Լիազոր մարմնի փոփոխության դեպքում Կողմերն այդ մասին անհապաղ տեղեկացնում են ավանդապահին:

### **Հոդված 19**

Սույն Համաձայնագիրը կիրառվում է առանց Կողմ պետությունների քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները խախտելու, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակիցն են Կողմ պետությունները:

### **Հոդված 20**

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեակերպվում են առանձին արձանագրություններով:

### **Հոդված 21**

Կողմերի միջ եւ վեճերը, կապված սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ, լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով:

Եթե Կողմերը վեճը չեն կարգավորում մի Կողմից մյուս Կողմին՝ խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման վերաբերյալ պաշտոնական գրավոր հարցում հղելու ամսաթվից վեց ամսվա ընթացքում, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

### **Հոդված 22**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման կոմիտեն է, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու համար Կողմ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու ամսաթվից հետո 30 օրը լրանալու պահին:

Ուժի մեջ մտնելուց հետո, սույն Համաձայնագիրը բաց է Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ հանդիսացող այլ պետությունների միանալու համար՝ Համաձայնագրի բոլոր մասնակից պետությունների համաձայնությամբ:



Համաձայնագրին միանալ ցանկացող պետությունները գրավոր խնդրանք են հղում ավանդապահին: Ավանդապահը պետության կողմից միանալու հարցում կատարելու մասին տեղեկացնում է բոլոր մասնակից պետություններին, որոնք ավանդապահի հաղորդագրությունն ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում հղում են նրան իրենց պատասխանը: Բոլոր մասնակից պետությունների պատասխաններն ստանալուց հետո ավանդապահն անհապաղ տեղեկացնում է այդ մասին Համաձայնագրին միանալ ցանկացող պետությանը:

Սույն Համաձայնագրին միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում են ավանդապահին:

Միացած պետության համար սույն Համաձայնագրին ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու ամսաթվից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի նոյեմբերի 19-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման կոմիտեում, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի ավանդապահը եւ Կողմերից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված օրինակը:

(Ստորագրություններ)